ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, Կառավարական տուն 3

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմի բնապահպանության, գյուղատնտեսության և տնտեսական զարգացման ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ

(ծածկագիր՝ 3.1-7)

ա/ կատարում է բաժնի պետի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ որակով,
բ/ իր լիազորությունների սահմաններում անհրաժեշտության դեպքում նախապատրատում և բաժնի պետին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը , ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ,
գ/բաժնի պետի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխանները,
դ/ ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը,
ե/ մասնակցում է համայնքում իրականացվող էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացմանն ուղղված ծրագրերի մշակմանը և միջոցառումների իրականացմանը,
զ/համակարգում է համայնքի դպրոցների էկոլաբորատորիաների հետ տարվող աշխատանքները
է/ բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է էկոլոգիական տեղեկատվության և հասարակության իրազեկման աշխատանքների իրականացմանը,
ը/ բաժնի պետի հանձնարարութամբ մասնակցում է բնապահպանական,առողջապահական, գյուղատնտեսական զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին,
թ/մասնակցում է գյուղատնտեսական ռեսուրսների հաշվառման աշխատանքներին,
ժ/մասնակցում է անասնահակահամաճարակային միջոցառումների աջակցման աշխատանք-ներին,
ժա/ բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի առողջապահական համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումներին,
ժբ/բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է մասնագիտական դասընթացներին և կլոր սեղաններին:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա/ միջնակարգ կրթություն, առանց աշխատանքային ստաժի և փորձի.
բ/ Հայաստանի Հանրապետության սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
գ/ տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.
դ/ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայի միջոցներով աշխատելու ունակություն:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2022 թվականի մայիսի 25-ը, ժամը 10:00:

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք.Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 010 515-132):

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ